

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԽԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. — Ի Ս. ՂԱԶԱՐ

(Եար. տես Բազմ. 1922 էջ 349)

ԼԴ.

Մայրավանքին զիւանին մէջ հետագայ նամակին հետ միասին կը գտնուի հայ Թարգմանութիւնը ուրիշ ընդարձակ պաշտօնական վաւերաթուղթի մը՝ որ Ս. Աթոռին կողմանէ տրուած է առ Յովնան Եպիսկոպոս:

Նկատելով որ սերտ առնչութիւն ունի մեր հրատարակած նամակին պարունակութեան հետ, և բնականաբար ամենէն աւելի շահագրգռուողը յիշեալ անձնաւորութիւնն է, ուստի անտարակոյս՝ եթէ նոյն իսկ ինքը չէ Թարգմանիչը՝ սակայն ինքը ուղղակի Թարգմանել տուած ու զրկած ըլլալու է առ Մխիթար: Թուական չունի, բայց ինքնին կը հասկցուի որ Յովնանու նամակէն վերջն է կարգով:

Այդ վաւերաթուղթին մէջ ցտան է եօթ համարներով արտօնութիւններ կը շնորհուիին առաքելութեան փափագով վառուած Յովնան եպիսկոպոսի:

Կոնդակին խորագիրն է հետեւեալը. Հրամանատարներ ի սրբազան Տեսնեմ մերմէ տէր Բեկեւորդուսէ իւնամօքն Աստուծոյ Պապէ երկրատուներորդէ շնորհեցեալք Գերայրգերոյ Հօր Տեսնեմ Յօնանու Եղիայան Հայկազուն եպիսկոպոսի Սերաստիոյ, միախօնարի Առաքելականի վասն հայոց որք ի տեղիս Լիւստրա Գաւառին անտիոքացոց ի փոքր Հայաստան ընդ ուղղաօրոշքամբ Սրբոյ Ժողովոյն տարածմանն Հաւատոյն: Ստորագրած են «Պետրոս եպս. Սապիւնոյ Կարտիկալ (Ռքրօյան)» և «Աւետիքոս Լանժոս սրբոյ Հօտեականի Գրեկոքեանն Նօտար, աշխիքն Ատեհապարտ»:

Այս հակերթ տեղեկութենէն վերջ զնենք Յովնան եպս.ի մեկնումին գլխաւոր շարժառիթները:

Գերարգեցելոյ և գերիմաստի տեսան տեսան Մխիթարայ Աբրահօր

... Եթէ տէր աշողեսցէ, մայիսի Գ. կամ Ե, չիմ աստի պարգայով: Իրաւի զայս. պիտի միտ բնաւ իս լունէի՝ գոլով յուսահատ ի զաղարմանէ հալածանացն: Բայց Յակօբ եպիսկոպոսն ստամպուցի, որ այժմ առ Աստուած փոխեցաւ, ետ ինձ տեղեկութիւն Եօթնից գիւղիցն Անտիօքու, զոր իբրեւ լուայ, եկն առ իս բաղձան իմն գնալոյ ի կողմն այն, և մնաց այս բաղձան ներ սլտի իմում, և ստիպէլ օրստօրէ՛ յայտնել Սրբոյ Ժողո. վոյն: Զկնի հնկից ամօղո՞ մինչ տեսի թէ տակաւին կայ և ստիպէ գիս յաճախաբար, զրեւլ ծանուցի ժողովոյն սրբոյ այսու մոռօ. Եթէ իցէ յաստուածակոյս կողմանէ, ժողովն հրամայէ, և զապրելիսն իմ հոգացեալ առաքէ. ապա թէ իցէ զդուռն իմն բնութեան, կամ պատրանք իմն դիւաց՝ խափանէ զանց առնելով: Իսկ ես կայի ամենեւիմք

անգանազան, Զինի ծանուցմանն էանց եօթն ամիս՝ և ոչ գոյր պատասխան, մինչ զի ես ևս մոռացայ և ոչ ունէի այնքան փոյթ. և ապա յաւուր միում կարտինալ Պէթրէն ձայնեաց զիս և քննեաց զմիտս իմ. իբրև տեղեկացաւ, ասաց ինձ, թէ ժողովն ինձ յանձնեաց զիրողութիւնս այս, տայ քեզ միայն ճանապարհի խարճելս՝ և ոչ այլ ինչ, բայց ես ծանուցի զայս սրբազանի հայրապետին, և նա յանձն էառ տալ քեզ ապրելիս, այսինքն՝ ամիսն վեց սկութ՝ ներ առաքելականի պանդըխտութեան քում: Լինալ ի նմանէ զայս, իսկոյն մատուցի զչնորհակալութիւնս, և յայնմ օրէ սկսայ տեսանել զպատրաստութիւնս: . . .

Գերարգելութեան քոյոյ

1728, ապրիլի 24
ի սուրբ Մ. Եգիպտացին

Նուաստ ծառայ
Յօնան եպս. Սեպատտիոյ

ԼԵ.

Առաջին անգամն է որ կը ներկայանայ մեր այս հրատարակած թղթերուն մէջ Հ. Յակոբ Բուզայանի անունը: Ներկայ գրով կը հաղորդէ առ Մխիթար շահեկան լուրերու շարք մը: Ժանտամազին նկատմամբ առատօրէն տուած բազմամասն տեղեկութիւնները՝ որ յոյժ հետաքրքրական են՝ արժանի են պատմութեան բաժնին անցնելու:

Գերարգեցելոյ տեսառն մերոյ եռամեծի արքայոյ

Հօր Հոգեւորի մերոյս Մխարանուրեան

Կարօտայի յղցիւ և սիրալի տենջանօք, իբրու ներկայ եղեալ երջանիկ Հօրդ՝ զխանդաղուն համբոյր հանդերձ յիսուսաւանդ ողջունի մատուցանեմ. և ընդ ողջունիս զգործոց իմոց և զգիպուածոց համառօտակի ծանուցանեմ: Եւ զի յետ կելոյս իբրև զորոս ամիս Տրապիզոն մեծաւ մխիթարանօք պատմելոյ զբան տեսառն, լիալիս սիրով ուղարկելցայ յեղբարց ի Կումուշխանայ: Եւ զայլ ինչ գիտելիս Տրապիզոնու նախ քան զայս գիրս գրեցի, զոր յուսամ ժամանեալ գոլ առ տէրդ: Եւ ի Կումուշխանայ սակաւ զոլոյ վասն ուղղափառաց՝ ոչ յամեցի անդէն աւելի քան զամիս մի, զի մի դատարկացի բան քալորութեան, և ի նմին եղեալ զիրողութիւնս գրեցի նախ քան զայս. ուստի շուտով ուղարկեցայ ի նոցունց ի Կայրի: Ի նմին գտեալ զցանկալին իմ՝ Վերապատուելի Հայր Յակոբն՝ ոչ սակաւ լիացաք մխիթարանօք իրերաց. . . . Եւ ի Կարնոյ յունիվարի ելի ի ճանապարհ, և հասի ի Ժաւուրն՝ ի գիւղ մի մերձ Ախսիոյ. և անդէն մինչ զտեղի առեալ էի յաւուրս երիս՝ ահա եկին իշխանք քաղաքին տէր Յովհաննէսին, և մեծաւ ընդունելութեամբ ածին ի քաղաքն: Եւ ի նմին յետ ի գործ ածելոյս զանպիտոն յորս ամսեայ ժամանակաւ՝ յարեաւ կորտորիչ ժանտամազ մի հանգոյն Մարտիլիոյ ժանտամազին. մինչ զի հազիվ գտանիւր մարդ կենդանի՝ որ թաղիցէր զմեռեալն. ուստի ձայն ետու ժողովրդ(ե)անն մի փորձել զտէր ասելով. Որոյ վախճանն հասեալ է՝ մեռանի, և որոյ ոչ՝ ապրի: Ապա ուր լուսան ինձ՝ ելին ինե հանդերձ ի լերինս, թողեալ զկահ և զկարասին ի քաղաքն. և որք ոչ էլին ընդ մեզ ի լեան՝ կամ յաղազս աղբատութեան և կամ յաղազս անհոգութեան՝ կոտորեաց զնոսս մահն անխնայ. և որք ի լերինս էին՝ գոհանային զԱստուծոյ և օրհնէին զմառայդ և ասէին. Եղբւր ասիթ հոգեւոր և մարմնաւոր կենաց մերոց, յորժամ լսէին զանհամար մահացեալս գիւղից և քաղաքաց, Եւ թէ որպէս

ապրէաք ի լերինս՝ ոչ պատմեցից, զի մի առաւել ցաւեղիք: Եւ այս ահարկու մահն սկսաւ ի 202 քաղաքէ պարսից և տարածեցաւ ի բոլոր պարսկաստան. և անտի ենաս ի Վրաստան. և մինչ կարծէի թէ ի տաճիկս չիցէ եղեալ՝ ահա ենաս գիր մի ի կարնոյ ի լեառն ուր էաք, գրեցեալ ի հօրէ մերմէ, նորում յետ ժանուցանելոյ գիրս հարկաւորս՝ մաղթէ զազօթս ի մէնջ, աղագս սաստիկ ժանտամահին որ բնթանայ ի քաղաքն և ի գաւառս շուրջ գիւրեւ: Եւ ոչ գիտէր հայրն մեր թէ և մեք ի լերինս ցրուեալ եմք յայնի պազգաւ: Եւ մինչ ի լեառն էաք՝ ահա երեսեցաւ ոմն մեծամորուս ի լեռնակողմէն, առ որ առաքեցաք ոմն իմանալ թէ ով իցէ. առ որ հարցեալ է այրն, թէ անա իցէ քարո՞ գինջ Աստուայու: Իբրեւ ասացեալ է այր, ասէ ցմեբայինն. Երթ և ասա նմա, թէ պատրի մի եկեալ է և խնդրէ զքեզ. և իբրեւ գնացի և տեսի՝ ահա էր Վենէտիկցի պատրի մի զաբուշին ի բէտէնթօր վանդէ և էր փախուցեալ ի կօրի քաղաքէ յաղագս ժանտամահին. և իբրեւ երկնչեաք զի մի զուցցէ մահոտ իցէ, ասէ, մի հոգայք բնաւ, զի բազում օր է յորմէ հեռէ եկեալ եմ, և ոչ բնաւ ի շէնս մտեալ իմ. որ և կեցեալ ընդ մեզ աւուրս երկուս՝ եկեալ ի բէտէնթօրն. ուստի զայս գիրս ի լեառն գրեցի, և ետու նմա բերել. և գրիս մեշանն է ի ծխոյ մախրի, գրին՝ եղէգն շանթից, իսկ թուղթն տանկի. և երկընչիմ զուցցէ մինչև եկեսցէ թուղթս՝ մեշանն թափիցի. և լինիցի բանն անշշան... Եւ արդ լուարուք և զայս հիշանալիս, զի յաւուր հսկման մարմնոյ և արեան տեան՝ եկն ենաս ի քաղաքն նուիրաց մի Էլմիածնէ, որ էր Դփեանն. և մինչ չլնարեղէաք զարբազնութիւնն մեծաւ հանդիսիս՝ ծալեալ ծնկամբ նստեալ ի դասի՝ մոմոայր ինքն ընդ ինքեան և ասէր. Այդ ձեր արածդ՝ խոռվ եղնի իմ գլխիս. զոր իմանայք թէ զինչ կամի ասել. և մինչև ի խաշանիչը զարբազնութիւնն յաւազ սեղանէ՝ գրեթէ պայթեցաւ տան. շանթ ի փառացի Աստուծոյ, որպէս զդէն գերգնեսացոց որ ի դիւահարուռն էր մինչ ետեան ի հեռաստանէ՝ զփառազարդ գալուստն Քրիստոսի բազում ժողովրդօք, ի սաստիկ նախանձոյն աղաղակել սկսաւ և ասել Զք՝ կայ և այլն: Եւ յետ այնորիկ ըսկսաւ ուր ուրեք գնակառակութիւնս խօսիլ զաղտ ի դէմ մասանց հաւատոյ (քանզի ոչ կարէր յայտ խօսիլ) և էս լռեցուցի զքարոզն մինչև ի տօնն գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պողոսի: Եւ ի նմին աւուր յարեայ գրեթէ յատենի երկու հազար ժողովուրդեանն, և ի ներկայութեան նուիրակին շրեւ զամենայն հերձուածս գրեամբ հայոց և աստուածա, հնչիւն. և դարձեալ նօքօք հաստատեւ զամենայն ճշմարտութիւնս հաւատոյ. և ինքն արձանացեալ ի դասի լսէր զամենայն. և ժողովուրդն լցաւ ամենացեղ ուրախութեամբ յաղագս արիբերան լինելոյ հերձուածին. և բազումք զքարոզն զայն գրեցին, որպէս զի նաեւ այլոց հանդիպողաց՝ նովաւ պատասխանեցեն: Ապա յետ աւուրց ոմանց հարաւ ժանտամահն ի յսկերս իւր և աշակերտին զոր ունէր և բարձան ի միջոյ. ուստի կատարեցաւ անէծն զոր ինքնին ասէր. Խոռվ եղնի իմ գլխիս: Ահա ի սոցանէ եղև սկիզբն ժանտամահին, և յետ այսորիկ փախաք ի լերինս, զոր ի վերայ գրեցի...

Ըստրուկ ծառայ Տեսուդ
Հայր Եակոբ Բուզալեան(ն)

1728 սեպտեմբերի վերջն

